

դիպուածը նորոգուեցաւ, միշտ նոյնանման փոքրիկ գունդեր էին, որ քաղաք կը մտնէին:

Թողունք Վահրիճ իր քուէին, երթանք մեր երկու ընկերաց հետ, որ ուղղուեցան հետի դէպի Բագարան:

— Լաւ կը խօսիս,— կ'ըսէր Յովնան,— կ'ուզես յոյս ունենալ այդ երիտասարդին վրայ. այնպիսի յուսահատ վիճակի մէջ է մեր խեղճ ազգը, որ ո՛ւմ ըսես օգնութեան ձեռք պիտի երկնցնէ. ես տեսայ զինք, շատ խելօք եւ ուշիմ կ'երեւայ, բայց ժամանակը միայն կրնայ յայտնել թէ երեւոյթը պիտի իրագործի թէ ոչ:

— Տեսնեմք ի՞նչ է իր առաջարկութիւնը, ինքն է, որ զմեզ կը խնդրէ, ինքն է, որ ինձ մա)սնաւոր իմացուցեր էր, որ զքեզ առնում եւ գամ Բագարան եւ թէ շատ կարելոր խնդրոյ վրայ կը փափագի խորհրդածել. ես որ աշխարհքես զգուած կը խորհէի առնուլ գլուխս՝ անցնիլ Յունաց բաժինը, այս լուրիս վրայ զարմացայ՝ ուզեցի այս երիտասարդը տեսնել, որու վրայ ամէն մարդ գովութեամբ կը խոտի:

— Ամէ՛ն մարդ, կը նշանակէ՝ ո՛չ մէկ մարդ: Եթէ ես էլ ամենուն պէս ո՛վ որ իմ երեսիս ծիծաղէր նա գովէի, եթէ ես էլ ամենուն պէս որ անիրաւութեան մը փոխարէն նշոյլ մը տեսնելուն արդարութեան արեւ ծագեցաւ գոչէի, անշուշտ այդ երիտասարդը պիտի գովէի, վասնզի զիս անիրաւ բանտէ մը ազատեց. բայց ինձ եղած մէկ դիպուած եւ ուրիշներուն եղած հազար դիպուած բաւական են ըսել տալ թէ հաչ ազգին փրկութիւնն ծնաւ, որովհետեւ Բագրատունի սմբատ Սպարապետի որդի Աշոտ իշխան մը կայ: Տեսնե՛նք զինք հիմա փորձով թէ ի՞նչ է, եւ մինչեւ ո՛ր կ'երթայ իւր գործունէութիւնը ազգին ընդհանրութեան համար:

Այս միջոցիս ձիերու ոտից տրոփ լսուեցաւ եւ քանի մը հեծչալք անցան եւ ուղեւորեցան դէպի վերին բերդը, որ Ախուրեանի բարձրաւանդակը կը տանէր, հազիւ թէ քանի մը վայրկեան անցաւ ուրիշ փոքրիկ խումբ մը դարձչալ տեսնուեցաւ, երբ մեր երկու բարեկամք արդէն բերդին դռան հասեր էին: Հաչտնի կ'երեւեր